**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-4/10-1**

ք. Երևան 28.10.2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ Վ. Հովհաննիսյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Մաթևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ Կոտայքի մարզ ք. Եղվարդ, Եղվարդի խճուղի ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (***լրիվ կամ մասնակի***), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.8 Չննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամգիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 22370600 (քսաներկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են,սակայն ոչ ուշ քան 10.12.2016թ.:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի (ԵՏՄ անդամ պետության) սերտիֆիկատը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի

մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ Սպառազինության վարչությունը:**

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ պաշտպանության նախարարություն**
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/h 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ
**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Ժակ և Գոռ» » ՍՊԸ**
ՀՀ, ք.Հրազդան,Կենտրոն թաղ. 19/40
«Ամերիաբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 2380030415440100
ՀՎՀՀ 03012667
Տնօրեն
**Ա. ՄԱԹևՈՍՅԱՆ**

**Հավելված N 1**
**N ՇՀԱՊՁԲ-4/10-1** ***ծածկագրով գնման պայմանագրի***

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Չ/Հ | Անվանումը | Տեխնիկական ցուցանիշներ |
|---|---|---|---|
| | | 34331100/1/4/1 բեռնատար մեքենաների, ֆուրգոնների և ավտոմեքենաների պահեստամասեր (պահեստամասեր ավտոմեքենաների նորոգման և տեխնիկական սպասարկման) | |
| 1 | 1 | Արջնի կամրջակի զսպանների լրակազմ | 5557-2902012 ՌԴ արտադրության |
| 2 | 2 | Հովացման համակարգի ջրի մղիչ հավաքական | 740-1307010-11 «ՈՒրալԱզ» «ԿաՄԱԶ» ЗИЛ, УРАЛ-4320 |
| 3 | 7 | Հովացման ռադիատորի փողրակների լրակազմ | 5301-13030 (լրակազմը 2 հատից 4 հատ ճնշիչով) |
| 4 | 8 | Հարվածամեղմիչի վռան | 111-2915486 зил-130 ՌԴ արտադրության |
| 5 | 9 | Արգելակման համակարգի սկավառակ | 5301-3501070 «Ֆենըքս» ЗИЛ-5301 |
| 6 | 12 | Գլխավոր արգելակման գլան հավաքական | 5301-3505010( երկու հեղուկի տակառով) «ՌԱԱԶ» «Ֆենըքս» |
| 7 | 13 | Գլխավոր արգելակման գլան հավաքական | 5301-3505010 (հեղուկի մեկ տակառով նոր օրինակի) «ՌԱԱԶ» «Ֆենըքս» |
| 8 | 15 | Վառելիքի կոշտ զտման զտիչ | 3307-1105010 (ԳԱԶ-3307/08/09) ԲԲԸ «ԳԱԶ» |
| 9 | 16 | Տուրբոմղիչ | (TKP-6-00.01),600-1118010 ՏԿՌ-6 «Տուրբոկոմ» ԱՋՏԿ |
| 10 | 17 | Արգելակների գլխավոր գլան նոր օրինակի հեղուկի տակառով | 66-11-3505211-01«ՖԵՆՕՔՍ» |
| 11 | 21 | Արգելակման թմբուկ | 3205-3501070 «Ռյազանի ագրեգատների գործարան» |
| 12 | 22 | Ձեռքի արգելակման համակարգի մետաղաճոպան | 33097-3508068 L=1212մմ «Դմիտրովի գործարան» |
| 13 | 23 | Փոխանցումների տուփի առաջնային լիսեռ | 53-1701302 ЗКС ОАО г. Нижний Новгород «ԳԱԶ» գործարանի |
| 14 | 25 | Փոխանցումների տուփի երկրորդային լիսեռ | 5312-1701101 «ԳԱԶ» գործարանի |
| 15 | 26 | Փոխանցումների տուփի 1-ին փոխանցման ատամնանիվ | 52-1701110-31 «ԳԱԶ» գործարանի |
| 16 | 27 | Փոխանցումների տուփի 2-րդ փոխանցման ատամնանիվ | 52-1701111 «ԳԱԶ» գործարանի |
| 17 | 28 | Փոխանցումների տուփի 3-րդ փոխանցման ատամնանիվ | 52-1701113-10 «ԳԱԶ» գործարանի |
| 18 | 29 | Փոխանցումների տուփի 3-4 փոխանցումների ագույց (մուֆտա ) | 52-1701118-40 «ԳԱԶ» գործարանի |
| 19 | 30 | Փոխանցումների տուփի հետընթացի ատամնանիվների բլոկ | 52-1701080-22 «ԳԱԶ» գործարանի |
| 20 | 31 | Փոխանցումների տուփի կափարիչ հավաքական | 3307-1702010-10 «ԳԱԶ» գործարանի |
| 21 | 32 | Փոխանցումների տուփի իրան (քարտեր) | 5312-1701015-10 «ԳԱԶ» գործարանի |
| 22 | 33 | Փոխանցումների տուփի առաջնային լիսեռի առանցքակալի կափարիչ | 52-1701040 «ԳԱԶ» գործարանի |
| 23 | 34 | Ղեկային մեխանիզմի որդնյակ | 69-3401038 «ՈՒԱԶ» |
| 24 | 35 | Ղեկային մեխանիզմի լիսեռ հավաքական իր ակով և առանցքակալով | 69-3401060-Б/1078 «ՈՒԱԶ» |
| 25 | 36 | Զսպանի վռան | 469-2902028 ՌԴ արտադրության |
| 26 | 38 | Արգելակման սկավառակ | 3160-3501076 ՈՒԱԶ-պատրիոտ «Ֆենըքս» |
| 27 | 39 | Խցիկի տաքացուցիչի ռադիատոր | 469-8101060 Գունավոր մետաղից ոչ ալյումինե «ՇԱԱԶ» |
| 28 | 40 | Տուրբոմղիչ | 238 НБ-1118010 Г ТКР-11-238 НБ «Տուրբոկոմ» |
| 29 | 43 | Արջնի արգելակների ներքևի փողրակ | 5301-3506060 (ԶԻԼ-5301 բոլոր ՏU) ՌԴ արտադրության |
| 30 | 45 | Հիդրոուժեղարարի ճնշման առաքման փողրակ | 4331-3408020-10 (ԶԻԼ-5301 բոլոր ՏU) ՌԴ արտադրության |
| 31 | 47 | Կիսառնու խցօղակ | 51-2401034-А3 ԳԱԶ-66/3308 ՌԴ արտադրության |
| 32 | 48 | Կիսառնու խցօղակ | 307639-П ԶԻԼ-131 (50*76*12) ՌԴ արտադրության |
| 33 | 59 | Ակումլյատոր | 24վ.55/50 վտ. ցոկոլ P-45t Աշխատունակության տևողությունը առնվազն 220 ժամ |
| 34 | 60 | Ակումլյատոր | 24վ. 21վտ. ցոկոլ BA-15 S Աշխատունակության տևողությունը առնվազն 200 ժամ |
| 35 | 61 | Ակումլյատոր | 24վ.5վտ.ցոկոլ BA-15 S Աշխատունակության տևողությունը առնվազն 200 ժամ |
| 36 | 62 | Ակումլյատոր | 24վ.2-3վտ.ցոկոլ BA-9 S Աշխատունակության տևողությունը առնվազն 200 ժամ |

| | | | |
|---|---|---|---|
| 37 | 63 | Պղնձե խողովակ վառելիքի համակարգի 10մմ | Պատերի հաստությունը ոչ պակաս քան 1մմ.ԳՈՍՏ617-2006 |
| 38 | 64 | Պղնձե խողովակ օդի համակարգի 12մմ | Պատերի հաստությունը ոչ պակաս քան 1մմ.ԳՈՍՏ617-2006 |
| 39 | 65 | Խողովակի ծայրապնակ (նիպել 6մմ) | Պղնձյա կամ լատունե, Ներքին տրամագիծը 6 մմ. |
| 40 | 66 | Խողովակի ծայրապնակ (նիպել 8մմ) | Պղնձյա կամ լատունե, Ներքին տրամագիծը 8 մմ. |
| 41 | 68 | Խողովակի ծայրապնակ (նիպել 12մմ) | Պղնձյա կամ լատունե, Ներքին տրամագիծը 12 մմ. |
| 42 | 69 | Վառելիքի փողրակի ծայրապնակ օղակաձև գլխամասով, | 240-1104115 14մմ անցքով, և իր մանեկով (պողպատյա) |
| 43 | 70 | Կլինգրիտ տակդիրային | Մակնիշը ՊՄԲ, հաստությունը 1.0մմ +/- 0,2մմ. չափսերը ոչ պակաս 1000x1000 մմ. |
| 44 | 72 | Հերմետիկ | Ջերմադիմացկուն, քաշը 180գր. ոչ պակաս |
| 45 | 75 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 10մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 46 | 76 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 12մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 47 | 77 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 16մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 48 | 78 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 35մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 49 | 79 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 50մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 50 | 80 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 70մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 51 | 81 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 90մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 52 | 82 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 110մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 53 | 83 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 120մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |
| 54 | 84 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խոմուտ) | Նվազագույն ճնշման աշխատանքային տրամագիծը 140մմ, Որթնյակը և ժապավենը ցինկապատ, խրոմապատ բարձրորակ պողպատից կամ չժանգող պողպատից |

*Ապրանքները պետք է լինեն չօգտագործված:*
*Ապրանքները պետք է հանձնվեն՝ Կոտայքի մարզ ք. Եղվարդ, Եղվարդի խճուղի ՀՀ ՊՆ 84029 զորամաս*
*Կատալոգային կոդերը միարժեք որոշում են ապրանքատեսակի փեխնիկական բնութագիրը:*

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ պաշտպանության նախարարություն**
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/h 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ԷՏՍ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Ժակ և Գոռ» » ՍՊԸ**
ՀՀ, ք.Հրազդան,Կենտրոն թաղ. 19/40
«Առեքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 2380030415440100
ՀՎՀՀ 03012667

Տնօրեն

**Է. ՄԱԹևՈՍՅԱՆ**

**Հավելված N 2**
**N ՇՀԱՊՁԲ-4/10-1** ***ծածկագրով գնման պայմանագրի***

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Չ/Հ | Անվանումը | Չ/մ | Քա-նակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2016թ. ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.16թ |
| | | 34331100/1/4/1 բեռնատար մեքենաների, ֆուրգոնների և ավտոմեքենաների պահեստամասեր (պահեստամասեր ավտոմեքենաների նորոգման և տեխնիկական սպասարկման) | | | | | |
| 1 | 1 | Առջևի կամրջակի զսպանների լրակազմ | կ-տ | 20 | 160000 | 3200000 | 20 |
| 2 | 2 | Հովացման համակարգի ջրի մղիչ հավաքական | հատ | 12 | 54000 | 648000 | 12 |
| 3 | 7 | Հովացման ռադիատորի փողրակների լրակազմ | կ-տ | 10 | 3000 | 30000 | 10 |
| 4 | 8 | Հարվածամեղմիչի վռան | հատ | 80 | 300 | 24000 | 80 |
| 5 | 9 | Արգելակման համակարգի սկավառակ | հատ | 6 | 42000 | 252000 | 6 |
| 6 | 12 | Գլխավոր արգելակման գլան հավաքական | հատ | 4 | 56000 | 224000 | 4 |
| 7 | 13 | Գլխավոր արգելակման գլան հավաքական | հատ | 2 | 35000 | 70000 | 2 |
| 8 | 15 | Վառելիքի կոշտ զտման զտիչ | հատ | 100 | 8000 | 800000 | 100 |
| 9 | 16 | Տուրբոմղիչ | հատ | 30 | 109000 | 3270000 | 30 |
| 10 | 17 | Արգելակների գլխավոր գլան նոր օրինակի հեղուկի տակարով | հատ | 80 | 28000 | 2240000 | 80 |
| 11 | 21 | Արգելակման թմբուկ | հատ | 18 | 37000 | 666000 | 18 |
| 12 | 22 | Ձեռքի արգելակման համակարգի մետաղաճոպան | հատ | 70 | 3000 | 210000 | 70 |
| 13 | 23 | Փոխանցումների տուփի առաջնային լիսեռ | հատ | 30 | 20000 | 600000 | 30 |
| 14 | 25 | Փոխանցումների տուփի երկրորդային լիսեռ | հատ | 30 | 18000 | 540000 | 30 |
| 15 | 26 | Փոխանցումների տուփի 1-ին փոխանցման ատամնանիվ | հատ | 30 | 15000 | 450000 | 30 |
| 16 | 27 | Փոխանցումների տուփի 2-րդ փոխանցման ատամնանիվ | հատ | 30 | 12000 | 360000 | 30 |
| 17 | 28 | Փոխանցումների տուփի 3-րդ փոխանցման ատամնանիվ | հատ | 30 | 11300 | 339000 | 30 |
| 18 | 29 | Փոխանցումների տուփի 3-4 փոխանցումների ագույց (մուֆտա ) | հատ | 30 | 7600 | 228000 | 30 |
| 19 | 30 | Փոխանցումների տուփի հետընթացի ատամնանիվների բլոկ | հատ | 30 | 10900 | 327000 | 30 |
| 20 | 31 | Փոխանցումների տուփի կափարիչ հավաքական | հատ | 15 | 36000 | 540000 | 15 |
| 21 | 32 | Փոխանցումների տուփի իրան (քարտեր) | հատ | 5 | 73000 | 365000 | 5 |
| 22 | 33 | Փոխանցումների տուփի առաջնային լիսեռի առանցքակալի կափարիչ | հատ | 10 | 5100 | 51000 | 10 |
| 23 | 34 | Ղեկային մեխանիզմի որդնյակ | հատ | 10 | 9200 | 92000 | 10 |
| 24 | 35 | Ղեկային մեխանիզմի լիսեռ հավաքական իր ակով և առանցքակալով | հատ | 10 | 22000 | 220000 | 10 |
| 25 | 36 | Զսպանի վռան | հատ | 1200 | 160 | 192000 | 1200 |
| 26 | 38 | Արգելակման սկավառակ | հատ | 20 | 16000 | 320000 | 20 |
| 27 | 39 | Խցիկի տաքացուցիչի ռադիատոր | հատ | 27 | 24000 | 648000 | 27 |
| 28 | 40 | Տուրբոմղիչ | հատ | 2 | 250000 | 500000 | 2 |
| 29 | 43 | Առջևի արգելակների ներքևի փողրակ | հատ | 10 | 1900 | 19000 | 10 |
| 30 | 45 | Հիդրոուժեղարարի ճնշման առաքման փողրակ | հատ | 20 | 7000 | 140000 | 20 |
| 31 | 47 | Կիսաառնու խցօղակ | հատ | 60 | 550 | 33000 | 60 |
| 32 | 48 | Կիսաառնու խցօղակ | հատ | 60 | 390 | 23400 | 60 |
| 33 | 59 | Ավտոլամպ | հատ | 3000 | 486 | 1458000 | 3000 |
| 34 | 60 | Ավտոլամպ | հատ | 5000 | 100 | 500000 | 5000 |
| 35 | 61 | Ավտոլամպ | հատ | 3500 | 97 | 339500 | 3500 |
| 36 | 62 | Ավտոլամպ | հատ | 2000 | 97 | 194000 | 2000 |
| 37 | 63 | Պղնձե խողովակ վառելիքի համակարգի 10մմ | մետր | 200 | 2700 | 540000 | 200 |
| 38 | 64 | Պղնձե խողովակ օդի համակարգի 12մմ | մետր | 200 | 2900 | 580000 | 200 |
| 39 | 65 | Խողովակի ծայրապնակ (նիպել 6մմ) | հատ | 600 | 60 | 36000 | 600 |
| 40 | 66 | Խողովակի ծայրապնակ (նիպել 8մմ) | հատ | 2000 | 80 | 160000 | 2000 |
| 41 | 68 | Խողովակի ծայրապնակ (նիպել 12մմ) | հատ | 500 | 100 | 50000 | 500 |
| 42 | 69 | Վառելիքի փողրակի ծայրապնակ օղակաձև | հատ | 200 | 710 | 142000 | 200 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գլխամասով, | | | | | | |
| 43 | 70 | Կլինգրիտ տակդիրային | կգ | 100 | 3290 | 329000 | | 100 |
| 44 | 72 | Հերմետիկ | հատ | 40 | 660 | 26400 | | 40 |
| 45 | 75 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 500 | 94 | 47000 | | 500 |
| 46 | 76 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 500 | 99 | 49500 | | 500 |
| 47 | 77 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 300 | 108 | 32400 | | 300 |
| 48 | 78 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 200 | 128 | 25600 | | 200 |
| 49 | 79 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 400 | 138 | 55200 | | 400 |
| 50 | 80 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 500 | 156 | 78000 | | 500 |
| 51 | 81 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 200 | 178 | 35600 | | 200 |
| 52 | 82 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 100 | 205 | 20500 | | 100 |
| 53 | 83 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 100 | 235 | 23500 | | 100 |
| 54 | 84 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամութ) | հատ | 100 | 270 | 27000 | | 100 |

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ պաշտպանության նախարարություն**
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺՇ

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Ժակ և Գոռ» » ՍՊԸ**
ՀՀ, ք.Հրազդան,Կենտրոն թաղ. 19/40
«Առեքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 2380030415440100
ՀՎՀՀ 03012667

Տնօրեն

**Լ. ՄԱԹևՈՍՅԱՆ**

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-4/10-1 *ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Չ/Հ | Ապրանքի անվանում | Չ/մ | Քանակ | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| | | 34331100/1 Բեռնատար մեքենաների պահեստամասեր, այդ թվում՝ | դրամ | 1 | | | |
| 1 | 1 | Առջևի կամրջակի զսպանների լրակազմ | կ-տ | 20 | 3200000 | 3200000 | 3200000 |
| 2 | 2 | Հովացման համակարգի ջրի մղիչ հավաքական | հատ | 12 | 648000 | 648000 | 648000 |
| 3 | 7 | Հովացման ռադիատորի փողրակների լրակազմ | կ-տ | 10 | 30000 | 30000 | 30000 |
| 4 | 8 | Հարվածամեղմիչի վրան | հատ | 80 | 24000 | 24000 | 24000 |
| 5 | 9 | Արգելակման համակարգի սկավառակ | հատ | 6 | 252000 | 252000 | 252000 |
| 6 | 12 | Գլխավոր արգելակման գլան հավաքական | հատ | 4 | 224000 | 224000 | 224000 |
| 7 | 13 | Գլխավոր արգելակման գլան հավաքական | հատ | 2 | 70000 | 70000 | 70000 |
| 8 | 15 | Վառելիքի կոշտ զտման զտիչ | հատ | 100 | 800000 | 800000 | 800000 |
| 9 | 16 | Տուրբոմղիչ | հատ | 30 | 3270000 | 3270000 | 3270000 |
| 10 | 17 | Արգելակների գլխավոր գլան նոր օրինակի հեղուկի տակարով | հատ | 80 | 2240000 | 2240000 | 2240000 |
| 11 | 21 | Արգելակման թմբուկ | հատ | 18 | 666000 | 666000 | 666000 |
| 12 | 22 | Ձեռքի արգելակման համակարգի մետաղաճոպան | հատ | 70 | 210000 | 210000 | 210000 |
| 13 | 23 | Փոխանցումների տուփի առաջնային լիսեռ | հատ | 30 | 600000 | 600000 | 600000 |
| 14 | 25 | Փոխանցումների տուփի երկրորդային լիսեռ | հատ | 30 | 540000 | 540000 | 540000 |
| 15 | 26 | Փոխանցումների տուփի 1-ին փոխանցման ատամնանիվ | հատ | 30 | 450000 | 450000 | 450000 |
| 16 | 27 | Փոխանցումների տուփի 2-րդ փոխանցման ատամնանիվ | հատ | 30 | 360000 | 360000 | 360000 |
| 17 | 28 | Փոխանցումների տուփի 3-րդ փոխանցման ատամնանիվ | հատ | 30 | 339000 | 339000 | 339000 |
| 18 | 29 | Փոխանցումների տուփի 3-4 փոխանցումների ագույց (մուֆտա ) | հատ | 30 | 228000 | 228000 | 228000 |
| 19 | 30 | Փոխանցումների տուփի հետընթացի ատամնանիվների բլոկ | հատ | 30 | 327000 | 327000 | 327000 |
| 20 | 31 | Փոխանցումների տուփի կափարիչ հավաքական | հատ | 15 | 540000 | 540000 | 540000 |
| 21 | 32 | Փոխանցումների տուփի իրան (քարտեր) | հատ | 5 | 365000 | 365000 | 365000 |
| 22 | 33 | Փոխանցումների տուփի առաջնային լիսեռի առանցքակալի կափարիչ | հատ | 10 | 51000 | 51000 | 51000 |
| 23 | 34 | Ղեկային մեխանիզմի որդնյակ | հատ | 10 | 92000 | 92000 | 92000 |
| 24 | 35 | Ղեկային մեխանիզմի լիսեռ հավաքական իր ակով և առանցքակալով | հատ | 10 | 220000 | 220000 | 220000 |
| 25 | 36 | Զսպանի վրան | հատ | 1200 | 192000 | 192000 | 192000 |
| 26 | 38 | Արգելակման սկավառակ | հատ | 20 | 320000 | 320000 | 320000 |
| 27 | 39 | Խցիկի տաքացուցիչի ռադիատոր | հատ | 27 | 648000 | 648000 | 648000 |
| 28 | 40 | Տուրբոմղիչ | հատ | 2 | 500000 | 500000 | 500000 |
| 29 | 43 | Առջևի արգելակների ներքևի փողրակ | հատ | 10 | 19000 | 19000 | 19000 |
| 30 | 45 | Հիդրոուժեղարարի ճնշման առաքման փողրակ | հատ | 20 | 140000 | 140000 | 140000 |
| 31 | 47 | Կիսասռնու խցօղակ | հատ | 60 | 33000 | 33000 | 33000 |
| 32 | 48 | Կիսասռնու խցօղակ | հատ | 60 | 23400 | 23400 | 23400 |
| 33 | 59 | Ավտոլամպ | հատ | 3000 | 1458000 | 1458000 | 1458000 |
| 34 | 60 | Ավտոլամպ | հատ | 5000 | 500000 | 500000 | 500000 |
| 35 | 61 | Ավտոլամպ | հատ | 3500 | 339500 | 339500 | 339500 |
| 36 | 62 | Ավտոլամպ | հատ | 2000 | 194000 | 194000 | 194000 |
| 37 | 63 | Ողնձճ խողովակ վառելիքի համակարգի 10մմ | մետր | 200 | 540000 | 540000 | 540000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | 64 | Պղնձե խողովակ օդի համակարգի 12մմ | մետր | 200 | 580000 | 580000 | 580000 |
| 39 | 65 | Խողովակի ծայրապանակ (նիպել 6մմ) | հատ | 600 | 36000 | 36000 | 36000 |
| 40 | 66 | Խողովակի ծայրապանակ (նիպել 8մմ) | հատ | 2000 | 160000 | 160000 | 160000 |
| 41 | 68 | Խողովակի ծայրապանակ (նիպել 12մմ) | հատ | 500 | 50000 | 50000 | 50000 |
| 42 | 69 | Վառելիքի փողրակի ծայրապանակ օղակաձև գլխամասով, | հատ | 200 | 142000 | 142000 | 142000 |
| 43 | 70 | Կլինգրիտ տակդիրային | կգ | 100 | 329000 | 329000 | 329000 |
| 44 | 72 | Հերմետիկ | հատ | 40 | 26400 | 26400 | 26400 |
| 45 | 75 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 500 | 47000 | 47000 | 47000 |
| 46 | 76 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 500 | 49500 | 49500 | 49500 |
| 47 | 77 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 300 | 32400 | 32400 | 32400 |
| 48 | 78 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 200 | 25600 | 25600 | 25600 |
| 49 | 79 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 400 | 55200 | 55200 | 55200 |
| 50 | 80 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 500 | 78000 | 78000 | 78000 |
| 51 | 81 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 200 | 35600 | 35600 | 35600 |
| 52 | 82 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 100 | 20500 | 20500 | 20500 |
| 53 | 83 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 100 | 23500 | 23500 | 23500 |
| 54 | 84 | Փողրակի մետաղական որդաձև ճնշիչ (խամուտ) | հատ | 100 | 27000 | 27000 | 27000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ պաշտպանության նախարարություն**
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏՎ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊՓ

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Ժակ և Գոռ» » ՍՊԸ**
ՀՀ, ք.Հրազդան,Կենտրոն թաղ. 19/40
«Առեքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 2380030415440100
ՀՎՀՀ 03012667

Տնօրեն

**Լ. ՄԱԹևՈՍՅԱՆ**

**Հավելված 4**
**N ՇՀԱՊՁԲ-4/10-1** ***ծածկագրով գնման պայմանագրի***

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

, , , , 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ ,________________ է 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ____ ______________ 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված 4.1**
**N ՇՀԱՊՁԲ-4/10-1** ***ծածկագրով գնման պայմանագրի***

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ——————————————ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
—————————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ——— -ին կնքված N —————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ———— — -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն